Հավելված 6
«ՍՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/21»* ծածկագրով
գնանշման հարցման **հրավերի**

# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՍՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/21-3

ք. Սևան «08» 05 2020 թ.

ԱՆ «Սևանի հոգեկան առողջության կենտրրոն» ՓԲԸ-ն դեմս տնօրեն Դավիթ Կարապետյանի, որը գործում է ԱՆ «Սևանի հոգեկան առողջության կենտրրոն» ՓԲԸ-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և <<Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Վաղինակ Եղիազարյանի, որը գործում է <<Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա>> ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ` պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով` Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ` ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Գնորդն իրավունք ունի՝**

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 3 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 3 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**2.2 Գնորդը պարտավոր է՝**

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

**2.3 Վաճառողն իրավունք ունի՝**

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

**2.4 Վաճառողը պարտավոր է՝**

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 5224500 /հինգ միլիոն երկու հարյուր քսանչորս հազար հինգ հարյուր/ ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:[17] Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն

---

[17] Եթե Վաճառողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի,ապա պայմանագիրը կնքել իս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:

ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

## 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[20] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի

---

[20] Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:

մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով.

1) Վաճառողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

---

*Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:*

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

**10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

ԳՆՈՐԴ

ՀՀ ԱՆ Սևանի հոգեկան առողջության կենտրոն ՓԲԸ

ք. Սևան, Կարմիր բանակի 68

0261-2-41-73

ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ ՓԲԸ "Սևան" մասնաճյուղ

16034026004300

08601459

Դավիթ Կարապետյան

------------------------------------

/ստորագրություն/

Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ

Արարատի մարզ, ք. Մասիս, 1-ին փող.

Արդշինբանկ ՓԲԸ Մասիս մ/ճ

Հ/Հ՝ 2472900158630000

ՀՎՀՀ՝ 03804898

0236 -4 - 04 -01

Վաղինակ Եղիազարյան

------------------------------------

/ստորագրություն/

Կ.Տ

Հավելված N 1
« 08 » 05 2020թ. կնքված
ՄՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/21-3 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատակարարման | | |
| | | | | | | | | հասցեն | ենթակա քանակը | Ժամկետը*** |
| 5 | 18311170 | Ննջազգեստներ /ձմեռային/ | ԿԱՆԱՅԻ ՁՄԵՌԱՅԻՆ ՆՆՋԱԶԳԵՍՏ<br>Նկարագիր<br>Կանացի դասական ձմեռային ննջազգեստ: Տաբատի գոտին 3,5սմ էլաստիկ, համակցված ժապավենով: Շապիկը երկար թևերով, վիզը եռանկյուն բացվածքով: Տաբաթը միագույն, իսկ շապիկը նախշերով կտորից (ըստ հավելվածի գծապատկերի) /կցվում է/:<br>Առանձնահատկություններ<br>Բոլոր միացնող կարերը մշակվում են 4 թել մաքրակարով: Վիզը մշակվում է էլաստիկ մանժետով լայնությունը 1. 8- 2 սմ: Մայկայի ներքնամասը մշակվում է հարթակարով լայնությունը 1. 5- 1. 8սմ: Թևերը մշակվում են էլաստիկ մանժետով լայնությունը 5- 6 սմ: Հատվող կարերը | հատ | 4500 | 990000 | 220 | ք. Սևան Կարմիր Բանակի 68 | 220 | 2020 թվականի օգոստոս ամսին |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ամրակարվում են հատուկ նշանակության մեքենայով: Շալվարի գոտին մշակվում է էլաստիկ ժապավենով լայնությունը 3. 5 սմ և գոտքատեղը հարթակարվում է, որի մեջ տեղադրվում է շարժական ժապավեն: Տոտերը մշակվում են հարթակարով լայնությունը 1. 5-1. 8սմ :<br>Չափերի թույլատրելի առավելագույն շեղումը 1 սմ:<br>Գույն<br>Տաքատը լինի միագույն /երանգները համաձայնեցնել նմուշը ներկայացնելու ժամանակ/:<br>Շապիկը տաբատի գույնին համապատասխան նախշերով և դիզայնով հարմարեցված կանացի հագուստների համար:<br>Կտորի բաղադրություն<br>100% բամբակ<br>Կտորի տեսակը Futer, խտությունը նվազագույնը 190/մ2<br>Կար<br>Թելի գույն- ըստ կտորի գույնի<br>Հարթակար կարի խտությունը 3. 5կկթ/սմ, լայնությունը 7-9մմ, թելը 150/2 den 100% պոլիէսթեր:<br>Մաքրակարերի թել 150/2 den 100% պոլիէսթեր, կարի խտությունը 3. 5կկթ/սմ, նվազագույնը լայնությունը 0. 6 սմ:<br>Փաթեթավորում | | | | | | | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Յուրաքանչյուր հավաքածուն պետք է փաթեթավորված լինի մեկ պոլիէթիլենային տոպրակով:<br>Չափս<br>Չափսերը կտրամադրվեն պատվիրատուին նմուշները ներկայացնելու ժամանակ<br>Անհրաժեշտության դեպքում մատակարարման ժամանակ կտորի տեսակարար քաշը և կարերի տեխնոլոգիական համապատասխանությունը ստուգվելու է համապատասխան սարքերով:<br><br>Մինչև ապրանքի մատակարարելը մատակարարը պետք է ապահովի առնվազն 4 տեսակի նմուշներ՝ ընտրություն կատարելու համար: | | | | | | | |
| 11 | 18341100 | Շապիկ կանացի կարճաթև | ՇԱՊԻԿ ԿԱՆԱՑԻ /ՄԱՅԿԱ/ ԿԱՐՃ ԹԵՎԵՐՈՎ<br>Նկարագիր<br>Կանացի դասական շապիկ /մայկա/ t-shirt, կարճ թևերով(ըստ հավելվածի գծապատկերի) /կցվում է/:<br>Առանձնահատկություններ<br>Բոլոր միացնող կարերը մշակվում են 4 թել մաքրակարով: Վիզը մշակվում է էլաստիկ մանժետով լայնությունը 1. 5-1. 8 սմ: Մայկայի ներքևամասը և թևերը մշակվում են հարթակարով լայնությունը 1. 5-1. 8սմ: Հատվող կարերը | հատ | 1800 | 450000 | 250 | ք. Սևան Կարմիր Բանակի 68 | 250 | Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 20 օրացուցային օրվա ընթացքում |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ամրակարվում են հատուկ նշանակության մեքենայով:<br>Չափերի թույլատրելի առավելագույն շեղումը 1 սմ:<br>Գույն<br>Միագույն /երանգները համաձայնեցնել նմուշը ներկայացնելու ժամանակ/<br>Կտորի բաղադրություն<br>100% բամբակ<br>Կտորի տեսակը jersey, խտությունը նվազագույնը 140գր/մ2<br>Կար<br>Թելի գույն- ըստ կտորի գույնի<br>Հարթակար կարի խտությունը 3. 5կկթ/սմ, լայնությունը 7-9մմ, թելը 150/2 den 100% պոլիէսթեր:<br>Մաքրակարերի թել 150/2 den 100% պոլիէսթեր, կարի խտությունը 3. 5կկթ/սմ, նվազագույնը լայնությունը 0. 6 սմ:<br>Փաթեթավորում<br>Յուրաքանչյուր տաս հատը պետք է փաթեթավորված լինի մեկ պոլիէթիլենային տոպրակով:<br>Չափս<br>Չափսերը կտրամադրվեն պատվիրատուին նմուշները ներկայացնելու ժամանակ<br>Անհրաժեշտության դեպքում մատակարարման ժամանակ կտորի տեսակարար քաշը և կարերի տեխնոլոգիական համապատասխանությունը | | | | | | | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ստուգվելու է համապատասխան սարքերով:<br>Մինչև ապրանքի մատակարարումն իրականացնելը Գնորդին ներկայացնել մատակարարման ենթակա ապրանքի նմուշը՝ համաձայն պայմանագրով հաստատված տեխնիկական բնութագրի: | | | | | | | |
| 12 | 18311210 | Շապիկ կանացի | ԿԱՆԱՅԻ ԱՄԱՌԱՅԻՆ ՇԱՊԻԿ /ՄԱՅԿԱ/<br>Նկարագիր<br>Կանացի դասական ներքնաշոր-շապիկ /մայկա/ կառուցվածքը և ձևավորումը ըստ հավելվածի /կցվում է/:<br>Առանձնահատկություններ<br>Բոլոր միացնող կարերը մշակվում են 4 թել մաքրակարով: Բեյկաների լայնությունը 1. 3սմ: Մայկայի ներքնամասը մշակվում է հարթակարով լայնությունը 1. 5-1. 8սմ: Հատվող կարերը ամրակարվում են հատուկ նշանակության մեքենայով:<br>Չափերի թույլատրելի առավելագույն շեղումը 1 սմ:<br>Գույն<br>Երկնագույն և վարդագույն /երանգները համաձայնեցնել նմուշը ներկայացնելու ժամանակ/<br>Կտորի բաղադրություն<br>100% բամբակ | հատ | 996 | 498000 | 500 | Ք. Սևան Կարմիր Բանակի 68 | 500 | Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 20 օրացուցային օրվա ընթացքում |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Կտորի տեսակը open-end,<br>խտությունը նվազագույնը 130գր/մ2<br>Կար<br>Թելի գույն- ըստ կտորի գույնի<br>Հարթակար կարի խտությունը<br>3.5կկթ/սմ, ասեղներ<br>հեռավորությունը 0.3-0.4սմ, թելը<br>150/2 den և 40/2 100% պոլիէսթեր:<br>Մաքրակարերի թել 150/2 den 100%<br>պոլիէսթեր,  կարի խտությունը<br>4կկթ/սմ, նվազագույնը լայնությունը<br>0. 6 սմ:<br>Փաթեթավորում<br>Յուրաքանչյուր տասը հատը պետք<br>է փաթեթավորված լինի մեկ<br>պոլիէթիլենային տոպրակով:<br>Չափս<br>Չափսերը կտրամադրվեն<br>պատվիրատուին նմուշները<br>ներկայացնելու ժամանակ<br>Անհրաժեշտության դեպքում<br>մատակարարման ժամանակ կտորի<br>տեսակարար քաշը և կարերի<br>տեխնոլոգիական<br>համապատասխանությունը<br>ստուգվելու է համապատասխան<br>սարքերով:<br><br>Մինչև ապրանքի մատակարարումն<br>իրականացնելը Գնորդին<br>ներկայացնել մատակարարման<br>ենթակա ապրանքի նմուշը՝<br>համաձայն պայմանագրով<br>հաստատված տեխնիկական | | | | | | | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | բնութագրի: | | | | | | | |
| 13 | 18311110 | Կանացի վարտիք կարճ | ԿԱՆԱՅԻ ՎԱՐՏԻՔ /կարճ/<br>Նկարագիր<br>Կանացի դասական վարտիք, լայն կոնքով և բարձր գոտկատեղով ըստ հավելվածի /կցվում է/:<br><br>Առանձնահատկություններ<br>Բոլոր միացնող կարերը մշակվում են 4 թել մաքրակարով: Ներդիրի մշակումը մաքրակարով: Էլաստիկ ժապավենը 2սմ վրադիր, միացումը ամրակարով, տեղադրումը հատուկ նշանակության մեքնայով:<br>Վարտիքի տոտերը մշակվում է էլաստիկ ժապավենով 0. 7 սմ: Բոլոր հատվող կարերը ամրակարվում են հատուկ նշանակության մեքնայով:<br>Չափերի թույլատրելի առավելագույն շեղումը 1 սմ:<br><br>Գույն<br>Միագույն /երանգները համաձայնեցնել նմուշը ներկայացնելու ժամանակ/<br>Կտորի բաղադրություն<br>100% բամբակ<br>Կտորի տեսակը full lycra, խտությունը նվազագույնը 130գր/մ2<br>Կար<br>Թելի գույն- ըստ կտորի գույնի<br>Հարթակար կարի խտությունը 3. 5կկթ/սմ, լայնությունը 0. 3-0. 4սմ, | հատ | 348 | 174000 | 500 | ք. Սնան Կարմի ր Բանա կի 68 | 500 | Պայմանագ իրն ուժի մեջ մտնելուց 20 օրացուցայ ին օրվա ընթացքում |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | թելը 150/2 den 100% պոլիէսթեր:<br>Մաքրակարերի թել 150/2 den 100% պոլիէսթեր, կարի խտությունը 3. 5կկթ/սմ, նվազագույնը լայնությունը 0. 4 սմ:<br>Փաթեթավորում<br>Յուրաքանչյուր տաբր հատը պետք է փաթեթավորված լինի մեկ պոլիէթիլենային տոպրակով:<br>Չափս<br>Չափերը կտրամադրվեն պատվիրատուին նմուշները ներկայացնելու ժամանակ<br>Անհրաժեշտության դեպքում մատակարարման ժամանակ կտորի տեսակարար քաշը և կարերի տեխնոլոգիական համապատասխանությունը ստուգվելու է համապատասխան սարքերով:<br>Մինչև ապրանքի մատակարարումն իրականացնելը Գնորդին ներկայացնել մատակարարման ենթակա ապրանքի նմուշը՝ համաձայն պայմանագրով հաստատված տեխնիկական բնութագրի: | | | | | | | |
| 14 | 18311110 | Կանացի վարտիք երկար | ԿԱՆԱՑԻ ՎԱՐՏԻՔ<br>Նկարագիր<br>Կանացի վարտիք փողքերով «pantaloon» ոճի ըստ հավելվածի /կցվում է/: | հատ | 549 | 274500 | 500 | ք. Սևան Կարմիր Բանակի 68 | 500 | Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 20 օրացուցային օրվա ընթացքում |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Առանձնահատկություններ<br>Բոլոր միացնող կարերը մշակվում են 4 թել մաքրակարով: Ներդիրի մշակումը կցակարով: Էլաստիկ ժապավենը 2սմ վրադիր, միացումը ամրակարով, տեղադրումը հատուկ նշանակության մեքնայով:<br>Վարտիքի տոտերը մշակվում է հարթակարով լայնությունը 1.8-2սմ:<br>Չափերի թույլատրելի առավելագույն շեղումը 1 սմ:<br>Գույն<br>Միագույն /երանգները համաձայնեցնել նմուշը ներկայացնելու ժամանակ/<br><br>Կտորի բաղադրություն<br>100% բամբակ<br>Կտորի տեսակը full lycra, խտությունը նվազագույնը 130գր/մ2<br>Կար<br>Թելի գույն- Ըստ կտորի գույնի<br>Հարթակար կարի խտությունը 3.5կկթ/սմ, լայնությունը 0.3-0.4sմ, թելը 150/2 den 100% պոլիէսթեր:<br>Մաքրակարերի թել 150/2 den 100% պոլիէսթեր, կարի խտությունը 3.5կկթ/սմ, նվազագույնը լայնությունը 0.6 սմ: Կցակարի կարերի խտությունը 4կկթ/սմ, լայնությունը 0.5-0.6 մմ:<br>Փաթեթավորում<br>Յուրաքանչյուր տասը հատը պետք է փաթեթավորված լինի մեկ | | | | | | | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | պոլիէթիլենային տոպրակով:<br>Չափս<br>Չափսերը կտրամադրվեն պատվիրատուին նմուշները ներկայացնելու ժամանակ<br>Անհրաժեշտության դեպքում մատակարարման ժամանակ կտորի տեսակարար քաշը և կարերի տեխնոլոգիական համապատասխանությունը ստուգվելու է համապատասխան սարքերով:<br>Մինչև ապրանքի մատակարարումն իրականացնելը Գնորդին ներկայացնել մատակարարման ենթակա ապրանքի նմուշը՝ համաձայն պայմանագրով հաստատված տեխնիկական բնութագրի: | | | | | | | |
| 15 | 18311210 | Շապիկ տղամարդու | Շապիկ /մայկա/ տղամարդու ամառային:<br>Նկարագիր<br>Տղամարդու դասական ներքնաշոր-մայկա ըստ հավելվածի /կցվում է/:<br>Առանձնահատկություններ<br>Բոլոր միացնող կարերը մշակվում են 4 թել մաքրակարով: Բեյկաների լայնությունը 1. 8սմ: Մայկայի ներքնամասը մշակվում է հարթակարով լայնությունը 1. 8-2սմ: Հատվող կարերը ամրակարվում են հատուկ նշանակության մեքենայով: Չափերի թույլատրելի առավելագույն շեղումը 1 սմ: | հատ | 996 | 498000 | 500 | Ք. Սևան Կարմիր Բանակի 68 | 500 | Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 20 օրացուցային օրվա ընթացքում |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Գույն<br>Սև<br>Կտորի բաղադրություն<br>100% բամբակ<br>Կտորի տեսակը open-end, խտություն՝ նվազագույնը 130գր/մ2<br>Կար<br>Թելի գույն- Սև<br>Հարթակար կարի խտությունը 3. 5կկթ/սմ, ասեղներ հեռավորությունը 0. 5-0. 6սմ, թելը 150/2 den և 40/2 100% պոլիէսթեր:<br>Մաքրակարերի թել 150/2 den 100% պոլիէսթեր, կարի խտությունը 4կկթ/սմ, նվազագույնը լայնությունը 0. 6սմ:<br>Փաթեթավորում<br>Յուրաքանչյուր տասը հատը պետք է փաթեթավորված լինի մեկ պոլիէթիլենային տոպրակով:<br><br>Չափս<br>Չափսերը կտրամադրվեն պատվիրատուին նմուշները ներկայացնելու ժամանակ<br>Անհրաժեշտության դեպքում մատակարարման ժամանակ կտորի տեսակարար քաշը և կարերի տեխնոլոգիական համապատասխանությունը ստուգվելու է համապատասխան սարքերով:<br><br>Մինչև ապրանքի մատակարարումն | | | | | | | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | իրականացնելը Գնորդին ներկայացնել մատակարարման ենթակա ապրանքի նմուշը՝ համաձայն պայմանագրով հաստատված տեխնիկական բնութագրի: | | | | | | | |
| 17 | 18341100 | Շապիկ տղամարդու /ձմեռային/ | ՏՂԱՄԱՐԴՈՒ ՁՄԵՌԱՅԻՆ ՇԱՊԻԿ<br><br>Նկարագիր<br>Տղամարդու դասական ձմեռային շապիկ, երկար թևերով (ըստ հավելվածի գծապատկերի /կցվում է/):<br><br>Առանձնահատկություններ<br>Բոլոր միացնող կարերը մշակվում են 4 թել մաքրակարով: Վիզը մշակվում է էլաստիկ մանժետով /կանաչ գույնի/լայնությունը 2-2. 5 սմ: Մայկայի ներքնամասը մշակվում է հարթակարով լայնությունը 1. 8-2սմ: Թևերը /կանաչ գույնի/ մշակվում են էլաստիկ մանժետով լայնությունը 5- 6 սմ /կանաչ գույնի/: Ձախ թևի վրա պետք է մետաքյա թելով ասեղնագործած լինի հիվանդանոցի լոգոն /երկարությունը 10սմ, լայնությունը 10 սմ/՝ երկու գույներով՝ կապույտ (գույնի կոդը PANTONE 2945C) և սպիտակ : Կազմակերպության լոգոյի դիզայնի ֆայլը .pdf ֆորմատով կցվում է: Հատվող կարերը ամրակարվում են | հատ | 2988 | 717120 | 240 | ք. Սևան Կարմիր Բանակի 68 | 240 | 2020 թվականի օգոստոս ամսին |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | հատուկ նշանակության մեքենայով:<br>Չափերի թույլատրելի առավելագույն շեղումը 1 սմ:<br>Գույն<br>Կապույտ գույնի /երանգները համաձայնեցնել նմուշը ներկայացնելու ժամանակ/:<br>Կտորի բաղադրություն<br>100% բամբակ<br>Կտորի տեսակը Futer խտությունը նվազագույնը 190գր/մ2<br>Կար<br>Թելի գույն- ըստ կտորի գույնի<br>Հարթակար կարի խտությունը 3. 5կկթ/սմ, լայնությունը 7-9մմ, թելը 150/2 den 100% պոլիէսթեր:<br>Մաքրակարերի թել 150/2 den 100% պոլիէսթեր, կարի խտությունը 3. 5կկթ/սմ, նվազագույնը լայնությունը 0. 6 սմ:<br>Փաթեթավորում<br>Յուրաքանչյուր տասը հատը պետք է փաթեթավորված լինի մեկ պոլիէթիլենային տոպրակով:<br>Մինչև ապրանքի մատակարարումն իրականացնելը Գնորդին ներկայացնել մատակարարման ենթակա ապրանքի նմուշը՝ համաձայն պայմանագրով հաստատված տեխնիկական բնութագրի: | | | | | | | |
| 18 | 18341100 | Շապիկ կանացի /ձմեռային/ | ԿԱՆԱՑԻ ՁՄԵՌԱՅԻՆ ՇԱՊԻԿ ԵՐԿԱՐ ԹԵՎԵՐՈՎ | հատ | 2898 | 695520 | 240 | Ք. Սևան Կարմիր | 240 | 2020 թվականի օգոստոս ամսին |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Նկարագիր<br>Կանացի դասական շապիկ t-shirt, երկար թևերով(ըստ հավելվածի գծապատկերի /կցվում է/):<br><br>Առանձնահատկություններ<br>Բոլոր միացնող կարերը մշակվում են 4 թել մաքրակարով: Վիզը մշակվում է էլաստիկ մանժետով /կապույտ գույնի/լայնությունը 2-2. 5 սմ: Մայկայի ներքևամասը մշակվում է հարթակարով լայնությունը 1. 8-2սմ: Թևերը /կապույտ գույնի/ մշակվում են էլաստիկ մանժետով /կապույտ գույնի/լայնությունը 5- 6 սմ: Ձախ թևի վրա պետք է մետաքյա թելով ասեղնագործած լինի հիվանդանոցի լոգոն /երկարությունը 10սմ, լայնությունը 10 սմ/՝ երկու գույներով՝ կապույտ (գույնի կոդը PANTONE 2945C) և սպիտակ : Կազմակերպության լոգոյի դիզայնի ֆայլը .pdf ֆորմատով կցվում է: Հատվող կարերը ամրակարվում են հատուկ նշանակության մեքենայով: Չափերի թույլատրելի առավելագույն շեղումը 1 սմ:<br>Գույն<br>Կանաչ գույնի /երանգները համաձայնեցնել նմուշը ներկայացնելու ժամանակ/:<br>Կտորի բաղադրություն<br>100% բամբակ | | | | | Բանակի 68 | | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Կտորի տեսակը Futer խտությունը նվազագույնը 190գր/մ2<br>Կար<br>Թելի գույն- ըստ կտորի գույնի<br>Հարթակար կարի խտությունը 3. 5կկթ/սմ, լայնությունը 7-9մմ, թելը 150/2 den 100% պոլիէսթեր:<br>Մաքրակարերի թել 150/2 den 100% պոլիէսթեր, կարի խտությունը 3. 5կկթ/սմ, նվազագույնը լայնությունը 0. 6 սմ:<br>Փաթեթավորում<br>Յուրաքանչյուր տասը հատը պետք է փաթեթավորված լինի մեկ պոլիէթիլենային տոպրակով:<br>Մինչև ապրանքի մատակարարումն իրականացնելը Գնորդին ներկայացնել մատակարարման ենթակա ապրանքի նմուշը՝ համաձայն պայմանագրով հաստատված տեխնիկական բնութագրի: | | | | | | | |
| 19 | 18311110 | Վարտիք | Նկարագիր<br>Տղամարդու վարտիք փողքերով ըստ հավելվածի /կցվում է/:<br>Առանձնահատկություններ<br>Բոլոր միացնող կարերը մշակվում են 4 թել մաքրակարով: Արտաքին կարերը մշակվում են ունիվերսալ մեքենայակարով: Էլաստիկ ժապավենը 3. 5սմ, միացումը ամրակարով, տեղադրումը հատուկ նշանակության մեքնայով: | հատ | 540 | 270000 | 500 | Ք. Սևան Կարմիր Բանակի 68 | 500 | Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 20 օրացուցային օրվա ընթացքում |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Վարտիքի տոտերը մշակվում է հարթակարով լայնությունը 1. 8-2սմ:<br>Չափերի թույլատրելի առավելագույն շեղումը 1 սմ:<br>Գույն<br>Սև<br>Կտորի բաղադրություն<br>100% բամբակ<br>Կտորի տեսակը jersey, խտությունը՝ նվազագույնը 145գր/մ2<br>Կար<br>Թելի գույն- Սև<br>Հարթակար կարի խտությունը 3.5կկթ/սմ, լայնությունը 0.7-0.9սմ, թելը 150/2 den 100% պոլիէսթեր:<br>Մաքրակարերի թել 150/2 den 100% պոլիէսթեր, կարի խտությունը 3.5կկթ/սմ, նվազագույնը լայնությունը 0,6 սմ: Էլաստիկ ժապավենի տեղադրման կարաբաժինները կարող են տատանվել՝ 0. 7-1. 4 սմ<br>Փաթեթավորում<br>Յուրաքանչյուր տասը հատը պետք է փաթեթավորված լինի մեկ պոլիէթիլենային տոպրակով:<br>Չափս<br>Չափսերը կտրամադրվեն պատվիրատուին նմուշները ներկայացնելու ժամանակ<br>Անհրաժեշտության դեպքում մատակարարման ժամանակ կտորի տեսակարար քաշը և կարերի տեխնոլոգիական | | | | | | | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | համապատասխանությունը ստուգվելու է համապատասխան սարքերով:<br><br>Մինչև ապրանքի մատակարարումն իրականացնելը Գնորդին ներկայացնել մատակարարման ենթակա ապրանքի նմուշը համաձայն պայմանագրով հաստատված տեխնիկական բնութագրի: | | | | | | | |
| 20 | 18341200 | Շապիկ, վարտիք /տղամարդու/ | ՏՂԱՄԱՐԴՈՒ ՁՄԵՌԱՅԻՆ ՇԱՊԻԿ-ՎԱՐՏԻՔ<br>Նկարագիր<br>Տղամարդու դասական ձմեռային ներքնաշոր շապիկ-վարտիք, երկար թևերով(ըստ հավելվածի գծապատկերի) /կցվում է/:<br><br>Առանձնահատկություններ<br>Բոլոր միացնող կարերը մշակվում են 4 թել մաքրակարով: Վիզը մշակվում է էլաստիկ մանժետով լայնությունը 2-2. 5 սմ: Մայկայի ներքնամասը մշակվում է հարթակարով լայնությունը 1. 8-2սմ: Թևերը մշակվում են էլաստիկ մանժետով լայնությունը 5- 6 սմ: Հատվող կարերը ամրակարվում են հատուկ նշանակության մեքենայով: Շալվարի գոտին մշակվում է էլաստիկ ժապավենով լայնությունը 3. 5 սմ և գոտքատեղը հարթակարվում է: Տոտերը | լրակազմ | 2988 | 657360 | 220 | ք. Սևան Կարմիր Բանակի 68 | 220 | 2020 թվականի օգոստոս ամսին |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | մշակվում են էլաստիկ մանժետով<br>լայնությունը 5- 6 սմ:<br>Չափերի թույլատրելի<br>առավելագույն շեղումը 1 սմ:<br>Գույն<br>Սև, մոխրագույն / համաձայնեցնել<br>նմուշը ներկայացնելու ժամանակ/<br>Կտորի բաղադրություն<br>100% բամբակ<br>Կտորի տեսակը Futer խտությունը<br>նվազագույնը 190գր/մ2<br>Կար<br>Թելի գույն- ըստ կտորի գույնի<br>Հարթակար կարի խտությունը<br>3. 5կկթ/սմ, լայնությունը 7-9մմ, թելը<br>150/2 den 100% պոլիէսթեր:<br>Մաքրակարերի թել 150/2 den 100%<br>պոլիէսթեր, կարի խտությունը<br>3. 5կկթ/սմ, նվազագույնը<br>լայնությունը 0. 6 սմ:<br>Փաթեթավորում<br>Յուրաքանչյուր հավաքածուն պետք<br>է փաթեթավորված լինի մեկ<br>պոլիէթիլենային տոպրակով:<br>Չափս<br>Չափսերը կտրամադրվեն<br>պատվիրատուին նմուշները<br>ներկայացնելու ժամանակ<br>Անհրաժեշտության դեպքում<br>մատակարարման ժամանակ կտորի<br>տեսակարար քաշը և կարերի<br>տեխնոլոգիական<br>համապատասխանությունը<br>ստուգվելու է համապատասխան | | | | | | | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | սարքերով: Մինչև ապրանքի մատակարարումն իրականացնելը Գնորդին ներկայացնել մատակարարման ենթակա ապրանքի նմուշը՝ համաձայն պայմանագրով հաստատված տեխնիկական բնութագրի: | | | | | | | |

* Ապրանքի մատակարարման ժամկետը, իսկ փուլային մատակարարման դեպքում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում: Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

** Պայմանագրով նախատեսված դեպքում Վաճառողը Գնորդին ներկայացնում է նաև ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատ:

*** Մատակարարման կոնկրետ օրը և քանակը որոշվում է Գնորդի կողմից նախնական (ոչ շուտ քան 3 աշխատանքային օր առաջ) պատվերի միջոցով՝ էլ. փոստով կամ հեռախոսազանգով:

***Ռուսերեն և հայերեն լեզուներով հրապարակված հայտարարության և (կամ) հրավերի տեքստերի տարաբնույթ (երկակի) մեկնաբանման հնարավորության դեպքում հիմք է ընդունվում հայերեն տեքստը:***


ԳՆՈՐԴ
ՀՀ ԱՆ Սևանի հոգեկան առողջության կենտրոն ՓԲԸ
ք. Սևան, Կարմիր բանակի 68
0261-2-41-73
ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ ՓԲԸ "Սևան" մասնաճյուղ
16034026004300
08601459
Դավիթ Կարապետյան
------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
«Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ
Արարատի մարզ, ք. Մասիս, 1-ին փող.
Արդշինբանկ ՓԲԸ Մասիս մ/ճ
Հ/Հ` 2472900158630000
ՀՎՀՀ` 03804898
0236 -4 - 04 -01
Վաղինակ Եղիազարյան
------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

*Հավելված N 2*
*« 08 » 05 2020 թ. կնքված*
*ՄՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-20/21-3 ծածկագրով պայմանագրի*

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 5 | 18311170 | Ննջազգեստներ /ձմեռային/ | | | | | | | | | 990000 | 990000 | 990000 | 990000 | 990000 |
| 11 | 18341100 | Շապիկ կանացի կարճաթև | | | | | | | 450000 | 450000 | 450000 | 450000 | 450000 | 450000 | 450000 |
| 12 | 18311210 | Շապիկ կանացի | | | | | | | 498000 | 498000 | 498000 | 498000 | 498000 | 498000 | 498000 |
| 13 | 18311110 | Կանացի վարտիք կարճ | | | | | | | 174000 | 174000 | 174000 | 174000 | 174000 | 174000 | 174000 |
| 14 | 18311110 | Կանացի վարտիք երկար | | | | | | | 274500 | 274500 | 274500 | 274500 | 274500 | 274500 | 274500 |
| 15 | 18311210 | Շապիկ տղամարդու | | | | | | | 498000 | 498000 | 498000 | 498000 | 498000 | 498000 | 498000 |
| 17 | 18341100 | Շապիկ տղամարդու /ձմեռային/ | | | | | | | | | 717120 | 717120 | 717120 | 717120 | 717120 |
| 18 | 18341100 | Շապիկ կանացի /ձմեռային/ | | | | | | | | | 695520 | 695520 | 695520 | 695520 | 695520 |
| 19 | 18311110 | Վարտիք | | | | | | | 270000 | 270000 | 270000 | 270000 | 270000 | 270000 | 270000 |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 20 | 18341200 | Շապիկ, վարտիք /տղամարդու/ | | | | | | | | | 657360 | 657360 | 657360 | 657360 | 657360 |

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

*** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

**ԳՆՈՐԴ**

ՀՀ ԱՆ Սևանի հոգեկան առողջության կենտրոն ՓԲԸ

ք. Սևան, Կարմիր բանակի 68

0261-2-41-73

ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ ՓԲԸ "Սևան" մասնաճյուղ

16034026004300

08601459

Դավիթ Կարապետյան

------------------------------

/ստորագրություն/

Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**

«Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ

Արարատի մարզ, ք. Մասիս, 1-ին փող.

Արդշինբանկ ՓԲԸ Մասիս մ/ճ

Հ/Հ՝ 2472900158630000

ՀՎՀՀ՝ 03804898

0236 -4 - 04 -01

Վաղինակ Եղիազարյան

------------------------------

/ստորագրություն/

Կ.Տ